

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԿԿԱՅԻՆ-
ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՒՆՆԵՐ

Վ. Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրները, լինելով առանձին պետությունների ներքին օրենսդրության կարգավորման առարկա, այնուամենայնիվ կազմում են միջազգային քաղաքականության, միջպետական հարաբերությունների կարևոր հիմնադրույթներից մեկը, ուստի ենթակա՝ միջազգային-իրավական կանոնակարգման: Ներկայումս ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերը գտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Դա բացատրվում է նրանով, որ, ինչպես ցույց է տալիս պատմական անցյալը և արդի զարգացումը, փոքր ժողովուրդների շահերի ոտնահարումը հաճախ հանգեցնում է ծանր հետևանքների՝ խախտվում են մարդու հիմնական իրավունքները, վտանգվում են պետությունների ներքին կայունությունը և ժողովրդավարական զարգացման հնարավորությունները, լուրջ սպառնալիք է ստեղծվում միջազգային խաղաղության համար:

Պետությունները որպես միջպետական համակարգի և միջազգային օրինաւտեղծության հիմնական սուբյեկտներ, հատուկ դեր և պատասխանատվություն են կրում ազգային փոքրամասնությունների իրավունքների և շահերի ապահովման, ազգային խտրականության կանխման գործում: Ազգային փոքրամասնությունները հաճախ անկարող են գտնվում ազդելու համապատասխան կառավարությունների գործունեության կամ օրինաւտեղծության վրա, սակայն նրանց ճակատագիրը չպետք է լիովին պայմանավորված լինի մեծամասնության հայեցողությամբ: Դրանով է պայմանավորված ազգային փոքրամասնությունների խնդիրների միջազգային-իրավական կարգավորման անհրաժեշտությունը, քանզի այս ճանապարհով նրանք ստանում են իրենց իրավունքների երաշխավոր՝ ի դեմս միջազգային օրենքի:

Հարցն ունի նաև այլ հարթություն, որը սերտորեն կապված է միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման հետ: Խոսքը ազգային փոքրամասնությունների պաշտպանության միջազգային բնույթի մասին է, քանզի այդ պաշտպանության արդյունավետության պակասը կարող է դերդել առանձին պետությունների՝ քայլեր ձեռնարկել ի պաշտպանություն արտերկրում բնակվող ազգային կամ կրոնական ընդհանրությամբ կապված փոքրամասնությունների շահերի, ինչը ոչ միշտ է, որ դրականորեն է անդրադառնում փոքրամասնությունների վիճակի, միջպետական հարաբերությունների և վերջին հաշվով ընդհանուր միջազգային մթնոլորտի վրա: Այդ պատճառով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հնարավոր եղանակներից մեր կարծիքով առավելությունը պետք է տալ միջազգայինին, որպես առավել անկողմնակալ և համընդհանուր:

Ձի կարելի ասել, որ միջազգային-իրավական պրակտիկայում քիչ ու-

շաղրություն է դարձել ազգային փոքրամասնությունների խնդիրներին: Հակառակը՝ «էթնիկական, կրոնական և լեզվական խմբերի պաշտպանութունը միջազգային իրավունքի ամենահին խնդիրներից է»¹: Փոքրամասնությունների միջազգային պաշտպանութունը կարևոր դեր է խաղացել մարդու իրավունքների պաշտպանության համակարգի սկզբնավորման գործում՝ «առաջին միջազգային նորմերը, որոնք ինչ-որ չափով վերաբերում են մարդու իրավունքներին և ազատություններին, ծագել են կրոնական և ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության ոլորտում»²: Նման օրինակների մեք կարող հնք հանդիպել դեռևս ուշ միջնադարում, երբ հատուկ ուշադրություն էր դարձվում կրոնական փոքրամասնությունների շահերի պաշտպանությանը: Այն ժամանակվա պրակտիկային բնորոշ էր «խտրականության ենթարկվող խմբերի, մասնավորապես կրոնական փոքրամասնությունների պաշտպանութունը, ընդ որում շեշտը դնելով ոչ թե իրավունքներ ճանաչելու, այլ հանդուրժողականություն ցուցաբերելու անհրաժեշտության վրա»³:

Զգալի առաջընթաց էր Ազգերի լիգայի փոքրամասնությունների պաշտպանության համակարգի ստեղծումը, չնայած նրա որոշակի թերություններին, որոնցից զխավորը (որը և ի վերջո նրա տապալման հիմնական պատճառներից մեկն էր) այդ համակարգի ոչ համընդհանուր բնույթն էր:

Առաջին միջազգային-իրավական փաստաթղթերը, որոնք վերաբերում են մարդու և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը համընդհանուր, ունիվերսալ հիմքի վրա, ստեղծվել են երկրորդ աշխարհամարտից հետո՝ ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունքում: Դրանց շարքն են բաժանում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), Մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերը (1966 թ.), ԵԱՀԿ եզրափակիչ ակտը (1975 թ.), Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագիրը (1992 թ.) և այլն:

Ինչպես տեսնում ենք խնդրո առարկան ունի որոշակի պատմական անցյալ, որի վերաբերյալ կուտակված է զգալի նորմատիվ նյութ և, այնուամենայնիվ, դժվար թե գտնվի միջազգային իրավունքում մի ոլորտ, որը լինի ավելի վիճահարույց, քան քննարկվող հարցը: Դա հետևանք է այն բանի, որ առ այսօր չկա ազգային փոքրամասնությունների միջազգային-իրավական պաշտպանության վերաբերյալ մշակված միասնական և ճանաչված համադրույթ, առանց որի անհնար է համաձայնեցնել և ներդաշնակել մոտեցումների, դրույթների և առաջարկությունների բազմազանութունը, որը դիտարկվում է դոկտրինալ աղբյուրներում և բարդացնում է միջազգային իրավունքի հետագա զարգացումը, մասնավորապես, առայժմ բաց մնացած որոշ հանգուցային հարցերի պարզումը:

Այդ հարցերի շարքում առաջնային կարևորություն ունի ազգային փոքրամասնությունների իրավական սահմանումը, որը բացակայում է միջազգային-իրավական ակտերում և որի վերաբերյալ չկա միասնական մոտեցում միջազգային իրավունքի գիտության մեջ և պրակտիկայում: Բանն այն է, որ առանց հստակորեն սահմանելու ազգային փոքրամասնությունը՝ դժվար է խոսել նրա իրավունքների և դրանց ապահովման մեխանիզմների մասին, որոնք մշակված են միջազգային ատյանների կողմից:

¹ P. Tornberry, International Law and the Rights of Minorities. Oxford, 1922, p. 3.

² P. A. Мюллерсон. Права человека: идеи, нормы, реальность. М., 1991, с. 27.

³ W. Lerner, Group rights and discrimination in International Law. London, 1991,

Չնայած այսօր չկա միասնական, համընդհանուր ճանաչված և, որը կարևոր է, կոնվենցիոն ամրագրված ազգային փոքրամասնությունների սահմանումը, դա չի նշանակում, որ պետությունները, միջազգային կազմակերպությունները անտեսել են խնդրի կարևորությունը: Այս հարցը երկար տարիներ եղել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կառույցի ներքո 1948-ին ստեղծված Խորականության կանխման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի ուշադրության կենտրոնում, սակայն, նրա ջանքերը վերջնական արդյունքի չեն հասել: Միակ, ինչ-որ չափով շոշափելի արդյունք այդ ուղղությամբ կարելի է համարել Ֆ. Կապոտորտիի՝ նշված ենթահանձնաժողովի Հատուկ զեկուցողի առաջարկած սահմանումը, որը մասնավորապես վերաբերում էր Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 27-րդ հոդվածին (նվիրված փոքրամասնությունների անդամների իրավունքներին): Չնայած դրան, Կապոտորտիի սահմանումը «կարող է ծառայել ավելի լայն նպատակների համար, և այսօր այն ամենահաճախ մեջբերվողն է մասնագիտական գրականության մեջ»⁴: Նշված սահմանումը երբեմն գրականության մեջ անվանվում է «դասական»⁵:

Կապոտորտիի սահմանման հիմքում ընկած է Ազգերի լիգայի գոյության օրոք Միջազգային արդարության մշտական պալատի՝ 1930 թ. հուլիսի 31-ին աված կոնսուլտատիվ եզրակացությունը հունա-բուլղարական համայնքների գործով: Այդ փաստաթղթում փոքրամասնություն հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. համայնքի սահմանման չափանիշներ պետք է լինեն՝ մի երկրում կամ տեղանքում ապրող մարդկանց կոլեկտիվի առկայությունը, եթե նրանք ունեն մի ռասա, կրոն ու ավանդույթներ և շնորհիվ դրա, միավորված են նպատակով պահպանել իրենց ավանդույթները, կրոնը, ապահովել երեխաների դաստիարակությունը և կրթումը իրենց ռասայի ոգու, ավանդույթների համաձայն և իրար օգնություն ցույց տալու պատրաստակամությամբ⁶:

Կապոտորտիի սահմանումը բերված ձևակերպման զարգացումն է և ըստ նրա ազգային փոքրամասնությունը «թվով փոքրաքանակ և չգերակայող դիրք գրավող խումբ է, որի անդամները այդ պետության քաղաքացիներ են, ունեն էթնիկական, կրոնական կամ լեզվական բնութագրեր, որոնցով տարբերվում են բնակչության հիմնական մասից և դրսևորում են, թեկուզ և անուղղակի, համերաշխության զգացում իրենց մշակույթի, իրենց ավանդույթների, կրոնի կամ լեզվի պահպանման նպատակով»⁷:

Ընդհանուր առմամբ այս սահմանումը կարող է լավ հիմք հանդիսանալ հետագա կոնվենցիոն ամրագրման համար, որոշ վերապահումներով: Մասնավորապես, խոսքը այն դրույթի մասին է, ըստ որի ազգային փոքրամասնությունը պետք է անպայման լինի փոքրաթիվ, այսինքն կազմի բնակչության թվական փոքրամասնություն, և չլինի գերակայող (դոմինանտ, տիրապետող): Մեր կարծիքով նշված հատկանիշները կարող են հանդես գալ ոչ միայն անպայման միապին, ինչպես բխում է սահմանման տեքստից, այլ նաև առանձին-առանձին, այսինքն նշված երկու հատկանիշներից յուրաքանչյուրը բավարար է, որպեսզի մյուս հատկանիշների առկայության դեպքում խումբը ո-

⁴ P. Tornberry, *ՈՉԿ. աշխ.*, էջ 6:

⁵ С. М. Пунжив. Проблема защиты прав меньшинств в международном праве. «Государство и право», 1992, № 8, стр. 125.

⁶ Advisory Opinion of 31 jule 1930. P. C. I. J. ser. B. N. 17, p. 33.

⁷ F. Capotorti, Study on the Rights of Persons belonging to Ethnic, Religions and Linguistic Minorities... U. N. Doc E (CN. 4/sub 2/384) Add 1—7, U. N. Sales N. E. 78. XIV.

րակվի որպես ազգային փոքրամասնություն: Մենք ընդունում ենք այն կարծիքը, համաձայն որի պարտադիր չէ որ «փոքրամասնությունը լինի անպայման թվով փոքր, քան գերակայող խումբը, քանի որ մեր մտահոգության առարկան ազգային փոքրամասնությունների հենց վիճակն է: Այս հնթատեքստում փոքրամասնությունը փաստորեն կարող է կազմել բնակչության թվական մեծամասնությունը, ինչպես Հարավային Աֆրիկայի սև աֆրիկացիների դեպքում: Ուստի, գիտական ճշգրտության տեսակետից շատ ցանկալի է շահմանափակվել փոքրամասնություն եզրույթի զուտ քանակական իմաստով»⁸:

Խոսելով ազգային փոքրամասնություններ հասկացության մասին, չի կարելի նաև շանդրադառնալ այն հարցին, թե արդյոք կան տարբերություններ «էթնիկական, կրոնական, լեզվական» և «ազգային» փոքրամասնությունների միջազգային-իրավական կարգավիճակի մեջ: Մի շարք հեղինակներ⁹ գտնում են, որ ազգային փոքրամասնություն են, ի տարբերություն էթնիկական կամ լեզվական փոքրամասնության, միայն այն խմբերը, որոնք կազմված են մի ազգի ներկայացուցիչներից, որն ունի իր ազգային պետությունը, բայց ապրում են այլ պետության տարածքում:

Ի տարբերություն այս մոտեցման կա մեկ այլ տեսակետ, ըստ որի «ազգային փոքրամասնություն» եզրույթն ընդգրկում է փոքրամասնությունների բոլոր տարատեսակները (էթնիկական, կրոնական, լեզվական), այսինքն այժմ պետք է ունենա ներառական, ընդհանրական բնույթ: Հենց այս մոտեցումն է դրսևորվում վերջին շրջանում ընդունված ՅԱՀԽ-ի բազմաթիվ փաստաթղթերում, ուր նշվում են միայն «ազգային» փոքրամասնությունները այնտեղ, ուր խոսքը փոքրամասնությունների տարբեր տեսակների մասին է: 1992-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված հռչակագիրը նույնպես ելնում է «ազգային» և «էթնիկական, կրոնական և լեզվական» փոքրամասնությունների նույնացման սկզբունքից: Նման դիրքորոշումը պաշտպանում են ոչ միայն հեղինակավոր միջազգային կազմակերպությունները, նրան հարում են նաև առանձին պետություններ: «Կանադան միշտ դիտարկել է այդ տերմինը (ազգային փոքրամասնություններ) որպես տարածվող էթնիկական, նաև մշակութային լեզվական և կրոնական փոքրամասնությունների վրա»¹⁰, — հայտարարել է այդ հրկրի պաշտոնական ներկայացուցիչը:

Ծթե ընդհանրացնելու իրենք շարադրածը, ապա պետք է ասել, որպեսզի խումբը ճանաչվի ազգային փոքրամասնություն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ 1) պետք է կազմի թվական փոքրամասնություն կամ լինի ոչ գերակայող դիրքում, 2) կազմված լինի այդ պետության քաղաքացիներից, 3) նրան բնորոշ լինեն հատուկ էթնիկական, կրոնական կամ լեզվական բնութագրեր, 4) նա պետք է ունենա ցանկություն պահպանել իր ինքնությունը:

Ազգային փոքրամասնությունների հասկացության խնդրի հետ է կապված միջազգային-իրավական մի այլ պրոբլեմ, որի հանգուցալուծումից շատ բան

⁸ O. Klineberg. The study of multinational Societes. The Multinational Society. Papers of the Ljubljana Seminar. Rowlew 1975. p. 15.

⁹ D. Türk, Norms and Institutions within the UN System on Minorities and Indigenous Peoples: Ethnic Conflict, Politics and Human Rights—Colombo 6—10 Nov, 1989. Veiter th. Commentary on the Concept of «National Minorities» (Rewu des Droits de l' Homme.— 1974.— vol VII—1, 2, 4, p. 287).

Y. Simonides, Collectiw Rights of Minorities in Europe— The Changing Political Structure of Europe. Aspects of International Law Dordrecht. 1991.

¹⁰ Копенгагенское совещание Конференции по человеческому измерению СБСЕ [5—29 июня 1990 г.]: Сборник научно-инф. материалов. М., 1991, стр. 23.

կհետակեցվի միջազգային իրավունքում, ինչն իր դրական, կարգավորիչ դերը կխաղա նաև համապատասխան միջազգային պրակտիկայում: Խոսքը ազգային փոքրամասնությունների և ինքնորոշման իրավունքի մասին է, այն մասին, թե տարածվում է արդյոք ինքնորոշման իրավունքը ազգային փոքրամասնությունների վրա, այսինքն կարող են արդյոք փոքրամասնությունները հանդես գալ որպես ինքնորոշման սուբյեկտ: Այս հարցին միանշանակ և ուղղակի պատասխան մենք չենք գտնի իրավական ակտերում, իսկ տեսութայան մեջ կբախվենք իրարամերժ կարծիքների: Եվ դա այն ժամանակ, երբ ազգերի, ժողովուրդների ինքնորոշումը մնում է արդի միջազգային իրավունքի և քաղաքականության ամենասուր և հրատապ խնդիրներից մեկը, որի ապացույցն են մերօրյա իրողությունները: Ըստ էության մենք գործ ունենք ժամանակակից պայմաններում միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման հարցի հետ: Դրանով է բացատրվում այն, որ ազգային փոքրամասնությունների միջազգային խնդիրները քննարկելիս, հարկ ենք համարում անդրադառնալ նաև այս հարցին, որ ուղղակիորեն կապված է փոքրամասնությունների վիճակի հետ տարբեր պետություններում և շոշափում է այնպիսի հիմնարար կատեգորիաներ, ինչպիսիք են ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշումը, ազգային և պետական ինքնիշխանությունը, մարդու և ժողովուրդների իրավունքները և այլն:

Մեր կարծիքով, քննարկվող ոլորտում գլխավոր խնդիրը, որ կանգնած է միջազգային իրավունքի գիտության առջև այն է, թե տարածվում է արդյոք ժողովուրդների ինքնորոշման իրավունքը փոքրամասնությունների վրա. և եթե այո, ապա ի՞նչ պայմաններում և ինչպես, քանզի ինքնորոշման իրավունքը որպես այդպիսին վաղուց է ամրագրվել միջազգային իրավունքում, այնպես որ բանավեճերը բուն այդ իրավունքի մասին թվում են ժամանակավրեպ: Ավելին, կարելի է ասել, որ ժողովուրդների ինքնորոշումը 20-րդ դարի պատմական զարգացման գլխավոր ուղղություններից մեկն էր և այս իրողության հետ հնարավոր չէ հաշվի չնստել: Սակայն առ այսօր ոչ ՄԱԿ-ի Կանոնադրությունը, ոչ այլ հիմնարար միջազգային փաստաթղթեր, ուր ամրագրված է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, չեն բովանդակում ինքնորոշման սուբյեկտը՝ «ժողովուրդ» հասկացությունը, չնայած միջազգային-իրավական գրականության մեջ տրված են բազմաթիվ (մոտ հարյուր) սահմանումներ:

Այսօր գոյություն ունի «ժողովուրդ» հասկացության միայն մեկ, քիչ թե շատ պաշտոնական մեկնաբանություն, որը տրվել էր Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսի քարտուղարության կողմից ՄԱԿ-ի Կանոնադրությունը մշակելու ժամանակ, ուր ասվում էր, որ «ժողովուրդ» նշանակում է մարդկանց խումբ, որը կարող է կազմել (կամ չկազմել) պետություն կամ ազգ»¹¹: Քարտուղարության այս պարզաբանումը «ժողովուրդ» հասկացությանը տալիս է առավել լայն իմաստ, ինչը շատ կարևոր է՝ հաշվի առնելով նրա պաշտոնական բնույթը:

Ինչ վերաբերում է տեսության մեջ առաջ քաշված սահմանումներին, ապա նրանք նույնպես ելնում են «ժողովուրդ» եզրույթի լայն ընկալումից: Այսպես, օրինակ, Գրոս էսպիելը բնորոշում է «ժողովուրդը» որպես «ցանկացած առանձին մարդկային խումբ, միավորված ինքնագիտակցությամբ և անկուսությամբ՝ կազմել հանուն ընդհանուր ապագայի գործելու ունակ ընդհան-

¹¹ P. Tornberry, Ազգ. աշխ., էջ 15:

րություն»¹²: Վերջապես, հանդիպում ենք նաև «Ժողովրդի» որպես ինքնորոշման սուբյեկտի սահմանման փորձեր հիմնված օբյեկտիվ հատկանիշների վրա: Այսպես, Օ. Ժուրեկի կարծիքով առավել ուշադրության է արժանի այն սահմանումը, որն առաջարկվել է Իրավաբանների միջազգային հանձնաժողովի կողմից Արևելյան Պակիստանի իրադարձությունների վերաբերյալ: Այն հիմնված է պատմական ընդհանրության, ռասայական, էթնիկական, մշակութային և լեզվական, կրոնական և գաղափարական կապերի, աշխարհագրական դիրքի, տվյալ կազմավորման ընդհանուր քանակի վրա¹³:

Այս բնույթի սահմանման մենք հանդիպում ենք նաև ՅՈՒՆԵՍԿՈ-ի համակարգում կատարված հատուկ հետազոտության մեջ, ուր նշվում է, որ «Ժողովուրդը» մարդկանց խումբ է, որն ունի հետևյալ բնութագրերը կամ նրանցից շատերը՝ ա) ընդհանուր պատմական ավանդույթներ, բ) ռասայական կամ էթնիկական ընդհանրություն, գ) մշակութային միասնություն, դ) լեզվական ընդհանրություն, ե) տարածքային կապեր, զ) ընդհանուր տնտեսական կյանք:

Խումբը չպետք է անպայման ունենա նշանակալից քանակություն (օրինակ, միկրո-պետությունների բնակչությունը), բայց պետք է իրենից ներկայացնի ավելին, քան անձերի պարզ միավորում: Բացի այդ, խումբը որպես այդպիսին պետք է ձգտի, որ իրեն ճանաչեն որպես ժողովուրդ և պետք է ունենա ժողովրդի ինքնագիտակցություն, թեպետ ունենալով վերը նշված բնութագրերը, խումբը կամ խմբի անդամները կարող են և շունենալ այդպիսի ցանկություն ու ինքնագիտակցություն, և հնարավոր է՝ խումբը պետք է ունենա հաստատություններ և այլ միջոցներ իր բնութագրերը և ընդհանրության ձգտումն արտահայտելու համար¹⁴:

Մենք կուզենայինք ներկայացված բազմաթիվ հատկանիշներից ընդգծել «տարածքային կապերի» առկայությունը: Ըստ մեզ հարցի տարածքային կողմը «Ժողովուրդ» հասկացության կարևոր և անհրաժեշտ բաղադրյալն է: Շատ նշանակալի է խմբի ընդհանուր տարածքի առկայությունը մի կողմից, և այդ տարածքին տվյալ խմբի պատմական պատկանելությունը՝ մյուս կողմից: Միաժամանակ անհրաժեշտ է ըմբռնել, որ ինքնորոշման սուբյեկտն ինքը ժողովուրդն է, ազգն է, ոչ թե ինչ-որ տարածք զրկված էթնիկական բնութագրերից:

Ինքնորոշման սուբյեկտ հասկացության նշված, ինչպես նաև գոյություն ունեցող այլ սահմանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից ոչ մեկը չի ծխտում և բացառում այն հնարավորությունը, որ որպես «Ժողովուրդ» ինքնորոշման սուբյեկտ կարող են հանդես գալ ազգային փոքրամասնությունները: «Ժողովրդի, ոչ միայն բնութագիր կամ հատկանիշ մեզ հիմքեր չեն տալիս պնդելու, որ նա չի կարող լինել ընդհանրություն, որը կազմում է առանձին պետության սահմաններում փոքրամասնություն:

Նույն հզրակացությանը կհանգենք, եթե հարցին մոտենանք այլ կողմից, այսինքն ազգային փոքրամասնության սահմանման տեսանկյունից: Հայտնի է, որ յուրաքանչյուր առարկա կամ երևույթ կարող է ունենալ բազում հատկանիշներ: Ճիշտ այդպես, նաև մարդկանց խմբերը կարող են ունենալ որոշակի հատկանիշներ և բնութագրեր: Սակայն ազգային փոքրամասնություն-

¹² H. Gros Espiell, The Rights to Self Determination— Implementation of Unated Nations Resolution. UN Pub. 1980 (Sales N E 79. XIX. 5).

¹³ O. H. Жупек. Самоопределение народов в международном праве. Сов. государство и право. № 10, 1990, с. 99.

¹⁴ U. N. Doc, SHS—89 (CONF 602) 7, Paris. 22. 2. 1990.

ների միջազգային-իրավական պաշտպանության նպատակների համար միջազգային-իրավական դոկտրինը և պրակտիկան առանձնացրել են այդ հատկանիշներից մի քանիսը, որոնք այստեղ հանդես են գալիս իբրև անհրաժեշտ և բավարար չափանիշներ սահմանման համար: Ակնառու է, որ խումբը կարող է ունենալ և այլ հատկանիշներ, որոնք ազգային փոքրամասնությունների պաշտպանության տեսանկյունից էական չեն, ինչը սակայն, չի նշանակում, որ նրանք գոյություն չունեն: Հետևաբար խումբը, որը որակվում է իբրև փոքրամասնություն, կարող է ունենալ (կամ չունենալ) և այլ հատկանիշներ, այդ թվում այնպիսիք, որոնք բնորոշում են տվյալ խումբը իբրև «ժողովուրդ», ուստի և ինքնորոշման սուբյեկտ: Բացի դրանից, այստեղ շատ կարևոր է այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնություն հասկացությունը բնութագրող չափանիշները չեն բացառում մարդկային որևէ ընդհանրության ճանաչել և որպես «ազգային փոքրամասնություն», և որպես «ժողովուրդ»:

Այսպիսով, «փոքրամասնություն» և «ժողովուրդ» հասկացությունների հարաբերության հարցում մենք և՛ փաստացի, և՛ ֆորմալ-իրավական առումներով բախվում ենք ոչ թե այս հասկացությունների տարանջատման անհրաժեշտության հետ, այլ հակառակը՝ դիտարկում ենք զուգակցվող ընդհանրությունների պատկեր: Այսինքն, որոշ փոքրամասնություններ (բայց ոչ բոլորը)¹⁵, այլ բան չեն, քան «ժողովուրդներ» և հակառակը՝ որոշ ժողովուրդներ կարող են որակվել իբրև ազգային փոքրամասնություն: Այլ կերպ ասած, թե տեսականորեն, թե գործնականում մենք կարող ենք հանդիպել (և հանդիպում ենք) դեպքերի, երբ որոշ խմբեր կարող են հանդես գալ իրավական երկու որակով՝ և՛ որպես ազգային փոքրամասնություններ, որոնց վրա տարածվում է միջազգային-իրավական պաշտպանությունը, և՛ որպես ժողովուրդներ՝ ինքնորոշման իրավունքի կրողներ:

Ազգային փոքրամասնությունների միջազգային-իրավական պաշտպանության խնդիրը, լուծելու համար անհրաժեշտ է պարզել՝ համապատասխանում է արդյոք տվյալ խումբը ազգային փոքրամասնության համանման, չափանիշներին, իսկ երբ հարց է ծագում ինքնորոշման մասին, ապա այստեղ անհրաժեշտ է համեմատել տվյալ խմբի և «ժողովուրդի» հատկանիշները: Այս ուղին, ըստ մեզ, արդյունավետ և բանական է, քանզի հստակեցնում է շատ խճճված հարցեր և հնարավոր է դարձնում բազմաթիվ խնդիրների արդարացի հանգուցալուծումը գիտական մոտեցումների հիման վրա:

Համոզված ենք, որ ներկայացված ընկալումները բավականին ներգաշնակ են ժամանակակից միջազգային իրավունքի ոգուն և տառին, բխում են ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ որպես նպատակ առաջադրված «մեծ և փոքր ազգերի իրավահավասարությունն» ապահովելու վե՛հ գաղափարից, ինչը հնարավոր է միայն մարդու, փոքրամասնությունների և ժողովուրդների բոլոր, այդ թվում ինքնորոշման, իրավունքների հարգման և պաշտպանման պայմաններում:

В. В. КОЧАРЯН — Некоторые проблемы международно-правовой защиты национальных меньшинств. — Строгое определение круга вопросов, связанных с обеспечением прав человека и национальных меньшинств в современных условиях составляет одну из важнейших задач международно-правовой науки. В настоящей статье предпринята по-

¹⁵ Նախ և առաջ խոսքը այսպես կոչված «դիսպերս» փոքրամասնությունների մասին է: Փոքրամասնությունը որպեսզի համարվի ինքնորոշման սուբյեկտ, պետք է համապատասխանի նրա բոլոր անհրաժեշտ չափանիշներին, այդ թվում նաև տարածքայինին:

пытка изучения проблемы правового определения понятия национальное меньшинство. Одновременно исследуется возможность распространения на них права наций и народов на самоопределение. Рассмотрение этих проблем приводит к выводу, что в современном международном праве не сформулированы критерии четкого разграничения понятий «национальное меньшинство» и «народ — субъект самоопределения». Другой вывод — в некоторых случаях эти понятия могут даже совпадать. По мнению автора, прояснение соотношения понятий национальное меньшинство и субъект права на самоопределение имеет принципиальное значение и может способствовать справедливому разрешению многих международных проблем, связанных с судьбой национальных меньшинств в современном мире.